Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՆ ՔԱՂԱՔԻ 1918 Թ. ՓՈԽԳԻՐ-ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայկական թղթադրամների ծագման ու զարգացման պատմությունը հետաքրքիր, բայց գիտականորեն գրեթե չուսումնասիրված թեմա է, որի լուսաբանումն, անշուշտ, կօժանդակի մեր ժողովրդի քաղաքական պատմության առանձին հարցերի ճշգրիտ որոշմանը։

Հայ ժողովուրդը, ելնելով քաղաքական ծանր դրությունից, հաճախ ստիպված էր բավարարվել օտար պետությունների կողմից թողարկված մետաղյա ու թղթե դրամներով։ Սակայն, բացի պետական նշանակության ընդհանուր թղթադրամներից, Հայաստանում շրջանառության մեջ են եղել մասնավոր բնույթ ունեցող թղթադրամներ, որոնց տարածումը սահմանափակվել է նահանգային. քաղաքային ընկերությունների և անգամ առանձին վաճառատների շրջանակներով։

Այս տեսակետից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի պետական պատմական թանգարանի դրամագիտական բաժնում պահվող երկու փոխգիր-թղթադրամները[1]*, որոնք թողարկվել են Վանում 1918 թվականին։*

Փոխգիրների բոլոր տեսակների օրինակները, դժբախտաբար, մենք չունենք և ստույգ խոսել թողարկված արժենիշների մասին դժվար է։ Ժամանակակիցները վկայում են, որ նրանց թողարկման արժենիշներն են 1, 3, 5, 10, 25, 50, 75 և 100 ռուբլի։ Սակայն պահպանված օրինակների հիման վրա կարելի է ենթադրել, որ փոխգիրները թողարկվել են 10, 25, 50 և 100 ռուբլի արժենիշով։ Հայաստանի պետական պատմական թանգարանի կողմից վերջերս ձեռք բերած փոխգիր-թղթադրամները հետևյալներն են.

Փոխգիր տասը ռուբլի (նկ. № 1)։ Թուղթը հաստարակ, ծածկված միլիմետրավանդակներով։ Չափը՝ 8,5 սմ լայնություն, 9,5 սմ երկարություն։

Պահպանությունը բավարար է, գրությունները ընթեռնելի։ Տպված է մի երեսի վրա գրչագիր, խմորատիպ։ Թանաքը՝ բաց-մանիշակագույն։ Բնագիրն ամբողջությամբ վերցված է քառանկյուն-ուղղանկյունի գծավոր շրջանակի մեջ։

Վերևում համեմատաբար խոշոր տառերով գրված է ՓՈԽԳԻՐ, որի տակ նշված է՝ «ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ». «1918 ՓԵՏ. 27», «ԱՐԺԵՔԸ ՏԱՍ ՌՈՒԲԼԻ»։ Փոխգիրն ունի երկու համարներ, որոնք ավելացվել են սև թանաքով խմորատպվելուց հետո։ Համարը՝ 381, սերիա № 2881։ Այնուհետև արձանագրված է՝ «ՎՃԱՐԵԼՈՒ Է ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՆԻ ԿՈՄԻՍԱՐԵԱԴ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ»։ «ՆԱՀՆԳ. ԿՈՄԻ., ՋԻՆ. ԿՈՄԻ., ԵՎԼ. ԿՈՄԻ». և երեք կոմիսարների ստորագրություններ սև թանաքով։ Թղթադրամը վավերացված է

---

1 Հազվագյուտ փոխգիրները թանգարանին նվիրել է Հայկ. ՍՍՀ վաստակավոր ուսուցիչ Արսեն Հացագործյանը, որը 1918 թ. Վասպուրականի նահանգում վարել է ներքին գործերի կոմիսարիատի գիվանապետի պաշտոնը և անձամբ մասնակցել է դրամանիշների ստեղծման գործին։

Վանի շրջանի մարզային կոմիսարի կնիքով (ռուսերեն լեզվով)՝ «Обл[астной] Комиссаръ Ванской обл[асти] Военнаго упр[авления] Тур[ецкой] Арм[ении] и пр[очих] обл[астей] Тур[ции] зан[имаемых] по пр[аву] войны».

Երկրորդ փոխգիր-թղթադրամի արժեքիշն է հարյուր ռուբլի (նկ. № 2)։ Չափը՝ 11,5 սմ լայնություն, 12,5 սմ երկարություն։ Թուղթը նույնն է։ Պահպանությունը բավարար է։ Գրությունները ընթեռնելի։ Դրամանիշի համարն է 819, սերիա № 0819, որոնք գրված են խմորատսվելուց հետո կարմիր գույնի



Նկ. 1. Փոխգիր տասը ռուբլի

թանաքով։ Վերևի անկյուններում գրված է «100р». մակագրությունը, կնիքը և ստորագրությունները նույնությամբ այնպես ինչպես նկարագրած սուաջին օրինակի վրա է, միայն բացակայում է գծավոր շրջանակը։

Վան քաղաքում թողարկված փոխգիր-թղթադրամի մի ուրիշ օրինակ պահպանվում է Բնյրութի Փալանջյան ճեմարանի թանգարանում[2]։

Այդ վոխգիր-թղթադրամի արժեքիշն է 50 ռուբլի (նկ. № 3)։ Չափը՝ լայնությունն ու երկարությունը 8,5 սմ։ Թղթադրամի համարն է 532, սերիան № 1532։ Վերևի անկյուններում՝ «50р.»։ Մակագրությունը, կնիքը և ստորագրություն-

---

2 Այս մասին մենք տեղեկացանք Սիլվա Կապուտիկյանի «Քարավանները դեռ քայլում են» գրքից, որտեղ հեղինակը գրում է. «...ուղեկիցներս իմ ուշադրությանը հանձնեցին հետաքրքիր մի ցուցոն. դեղնած թղթի վրա մի պատառ էր՝ վրան կնիք, ստորագրություն ու թանաքով գրված թվեր։ Վանի հերոսամարտի օրերին ինքնապաշտպանության կոմիտեի կողմից բաց թողնված՝ դրամին փոխարինող կտրոններից մեկն էր...»։

Տե՛ս «Քարավանները դեռ քայլում են», Երևան, «Հայաստան» հրատ., 1964, էջ 257։

Փալանջյան ճեմարանի փոխգիր-թղթադրամի լուսանկարը մեզ սիրով տրամադրեց Գրիգոր Շահինյանը։

ները կրկնում են Հայաստանի պատմության թանգարանում պահվող օրինակների մանրամասնությունները[3]։

Փոխգիրները ստորագրել են նահանգային կոմիսար Կոստանդին (Կոստի) Համբարձումյանը, դինվորական կոմիսար՝ Դրիգոր Դեգյանը (Բուլղարացի) և ելեմտից կամ ֆինանսների կոմիսար՝ Սամվել Մեսրոպյանը։ Վերջինիս անունով նահանգի բնակչությունը փոխգիրներն անվանել է «ՍԱՄՎԵԼԻ ՓՈՂ»։

Վասպուրականի շրջանը Արևմտյան Հայաստանի նահանգների շարքում իր աշխարհագրական դիրքով և պատմական իրադարձություններով նշանակալից տեղ էր գրավում։ Ունենալով համեմատաբար զարգացած առևտրա-արհեստագործական տնտեսություն, Վանի վիլայեթը, ինչպես և մյուս նահանգ-



Նկ. 2. Փոխգիր հարյուր ռուբլի

ները գտնվում էին քաղաքական ծանր վիճակում։ Այդ չէր վրիպել և ճանապարհորդների հայացքից։ Անգլիացի Լինչը գրել է. «Վանի հայկական բնակչության մոտ առևտուրը և արդյունաբերությունը գտնում են այնպիսի նպաստավոր պայմաններ, որ նրանք առավել երջանիկ ժամանակներում կհասնեին զգալի չափերի»[4]։

---

3 Մեզ հայտնի փոխգիրներից ևս չորս օրինակներ (10, 25, 50 և 100 ռուբլի) պահվում է Երևանում՝ բոնիստ Հ. Ադամյանի թղթադրամների ժողովածուի մեջ։

4 Армения. Путевые очерки и этюды. Х. Ф. Б. Линча, т. 2, 1910, стр. 113.

Միայն 1894—96 թթ. հայկական ջարդերի ժամանակ Վանում փակվել է 303 արհեստի և առևտրի կրպակ[5]։ Նույն վիճակում էր և գյուղատնտեսությունը, աշխատում էին մշակել այնքան, որ բավարարեին իրենց ներքին կարիքները։ Թուրքական կառավարության վարած ֆինանսական քաղաքականության հետևանքով, կարգավորված չէր և դրամական տնտեսությունը։ Տարբեր վիլայեթներում տարածված էին գանագան դրամական միավորներ։ Այսպես, եթե Վանի նահանգում դրամաշրջանառության մեջ իշխում էին ռուսական մետաղյա ու թղթե դրամները, ապա Սասունում հիմնական միավորը օսմանյան ղուրուշն էր՝ և նրա բաղկացուցիչ մասերը։ Առևտրի ոլորտում զգացվում է նաև կանխիկ դրամի պակասությունը։ Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը (Ագոն) իր «Վանի,

Նկ. 3. Փոխգիր հիսուն ղուրշի

Թիֆլիսի և Էրզրումի վիլայեթները» գրքում գրում է. «...այդ երկրում այնքան սակավ է դրամն ընդհանրապես և մանր դրամն առանձնապես, որ առևտուրը միանգամայն կաշկանդված էր։ Կարող ենք հրևակայել, որ հաճախ կամ գնողն է հրաժարվում գնումից կամ խանութպանը՝ վաճառքից միմիայն այն պատճառով, որ գնողի մի ոսկին մանրացնելու համար մանր դրամ չի ճարվում և այս տեղի է ունենում շատ անգամ»[7]։

Դրամական տարբեր սիստեմների առկայությունը՝ մի կողմից և մանր դրամների պակասությունը մյուս կողմից խիստ դժվարացնում էր առևտուրը։ Աշխատում էին հարմարվել և ստիպված ամրողջացնում էին գնահատումները,

5 Ա. Ս. Համբարյան, Ապրանքային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1965։ էջ 141։

6 Վ. Պետոյան, Սասնա ազգագրություն, Երևան, 1965, էջ 183։

7 Ագո, Վանի, Թիֆլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 262։

ըստ եղած դրամի արժեքի, կամ պարզապես փոխանակում ապրանքները։ Ադոն գրում է՝ «...աշխատում էին առևտրին որքան կարելի է պարզ ձև տալ և գնահատել ամբողջ զուրուշներով»[8]։ Դրամների մեծ միավորների մանրացումը նույնպես մեծ դժվարությունների հետ էր կապված։ Բացի այդ շրջանառության մեջ էին խիստ մաշված և արժեքազուրկ մանր դրամներ։

Չնայած Վանի նահանգը, որպես առանձին վարչական միավոր, ենթարկվում էր Անդրկովկասի կոմիսարիատին, այնուամենայնիվ 1917 թ. վերջերին, 1918 թ. սկզբներին նրա տնտեսական և ֆինանսական կյանքում փոփոխություններ տեղի չունեցան։ Ֆինանսական ծանր դրությունը շարունակվում էր ամենուրեք։ Ելնելով այս վիճակից Վանի նահանգի կոմիսարիատը 1918 թվականին թողարկեց վերոհիշյալ փոխգիր-թղթադրամները։ Այդ փոխգիրներով կատարվում էր մանր առ ու ծախս, վճարվում էին աշխատավարձ, մանրացվում էին դրամների մեծ միավորները և այլն։ Միաժամանակ փոխգիր թղթադրամները լրացնում էին մանր դրամների այն պակասը, որի կարիքը խիստ զգացվում էր ներքին շուկայում։

Հարց է ծագում՝ ինչո՞ւ երևան եկան այս փոխգիրները, քանի որ շրջանառության մեջ այդ ժամանակ կային անդրկովկասյան կոմիսարիատի կողմից թողարկված տպագիր, ավելի վստահելի բոները (1, 3, 5, 10, 50, 100 և 250 ռուբլի), որոնք պարտադիր շրջանառության մեջ էին պետական թղթադրամների հետ հավասար։

Փոխգիրների թողարկումը առաջացել էր պատերազմական դրության հետևանքով, երկրում տնտեսական ծանր վիճակի ստեղծման պատճառներով։ Բավական է վերհիշել, որ Երզնկայի զինադադարից հետո (1917 թ. դեկտեմբերի 5-ի) Հայաստանը ընդամենը մեկ և կես ամիս մնաց խաղաղ վիճակում։ Այդ կարճ ժամանակամիջոցում անդրկովկասյան կոմիսարիատը ի վիճակի չէր լայնորեն տարածելու 1918 թվականի սկզբներին թողարկած իր բոները, մանավանդ, որ շատ դժվարացել էր կապը կենտրոնի և նահանգների միջև։ Մյուս կողմից նկատի ունենալով Վանի նահանգի ակտիվ դերը ներքին ապրանք-փոխանակային ոլորտում, ինչպես և մանր դրամի խիստ սակավությունը, ուստի փոխգիրների ստեղծման անհրաժեշտությունը միանգամայն հասկանալի կդառնա։

Փոխգիրները հանդիսանալով վճարման միջոց, թղթադրամների այն շարքին չէին պատկանում, որոնք իրենց արժեքով հավասարվում էին մետաղյա դրամներին։ «Փոխգիր» նշանակում է փոխանակագիր, այսինքն որոշակի փաստաթուղթ, որով նահանգի կոմիսարիատը պարտավորվում էր հետագայում վճարել նրանց արժեքը։ Այդ մասին է վկայում փոխգիրի վրա եղած հետևյալ մակագրությունը՝ «Վճարելու է նահանգային Վանի կոմիսարեադ(ի) կոմիսարների խորհրդի կողմից»։ Այդ է վկայում նաև կնիքը, որը վավերական էր դարձնում այն, ժողովրդական մասսաների առաջ։ Եվ իրոք ականատեսները վկայում են, որ Վանից գաղթած բնակչությունը Թիֆլիսում փոխանակեց փոխգիրները անդրկովկասյան կոմիսարիատի բոներով։

Հետևաբար փոխգիրները իրենց բնույթով պատկանում էին թղթադրամների այն կարգին, որոնց պարտադիր շրջանառությունը թեև սահմանված է տեղական իշխանությունների որոշմամբ, սակայն ընդունելի էր առօրյա կյանքում

8 Ադոն, նշված աշխ., էջ 262։

մյուս տարածված մետաղյա և թղթե դրամների հետ մեկտեղ։ Չնայած փոխգիրների շրջանառության ժամկետը սահմանափակ չէր, այնուամենայնիվ հասկանալի է, որ դրանք երկար կյանք ունենալ չէին կարող։ Փոխգիրները շրջանառության մեջ են եղել ընդամենը 22 օր՝ 1918 թվականի փետրվարի 27-ից մինչև մարտի 21-ը, երբ 3-օրյա (1918 թ. մարտի 18—21-ը) կատաղի մարտերից հետո Վանի բնակչությունը չորրորդ անգամ ստիպված էր թողնել իր նվիրական քաղաքը, բռնելով գաղթի տառապալից ուղին։

Այսպիսով, փոխգիրները ոչ հեռու անցյալի այն կենդանի վկաներն են, որոնք շրջանառության մեջ դրվեցին տեղական իշխանության քաղաքական ծանր իրադրության պահին նպատակ ունենալով ներքին ուժերով կարգավորելու պրամական տնտեսության քայքայված վիճակը։